

թէ՝ Ս. Պետրոս իրօք «կազմակերպիչ մի է [«որ ընթերցումն ի միտ առնէ», «չ թէ միակ կազմակերպիչն»] Հոռոմեական քրիստոնեայ հաստատութեան» (եկեղեցւոյ)։

Ապա ուրեմն ի վերադոյն ասացելոցս յայտ է՝ թէ Ս. Պետրոս ի Հոռոմ գտանիւն, զործունէութիւնն անդէն, և նոյն քաղաքի եկեղեցին հիմնելն և հաստատելն, ասանց ամենայն հակառակութեան, կը մընայ սովորական սահմանքիւն մի եւեր, և «չ երբեք պատմական ստուգութիւն» Այժմու ճշմարտ անաչառ քննադատութիւնն, բայց «չ հնարիմաց կարծեցեալ սովետութիւնն, աւելի քան զայս չէ՝ կարող հաստատել և ընդունիլ։—

Ի վախճան բանիցս ի դէպ թուի արդեւք հարցանել՝ թէ երբ գնացած է Ս. Պետրոս ի Հոռոմ։

Արդ՝ յայտ է թէ Ս. Պաւղոս առաքեալ իրբե կալանաւոր ժամանեց ի Հոռոմ յամի 62, և անդ «եղև զերկեամ մի» (Գործ. ԻԲ. 30), ուստի մինչև ցամա 64. յետ այնորիկ իւր հետքն կը կորսուի։— Ըստ ամենայն հաւանականութեան Ներոնեան հրաւժանաց ժամանակ (Յուլիոս 64) նահատակուեցաւ։

Գարձեալ յայտ իսկ է և ասանց ամենայն երկրայութեան թէ յառաջ քան զՊաւղոս «չ ոք ի բուն Առաքելոց եկած է ի Հոռոմ։ Ուստի մինչև ցարկուստ Ս. Պաւղոս ի Հոռոմ Ս. Պետրոս զեռ չէր հասած անդր. ընդ այս չի՛ք ինչ տարակոյս։— Ապա ուրեմն երբ եղաւ ժամանումն նորա ի Հոռոմ, — զրեսց՛ւք առ վայր մի՝ թէ յայդմ մասին աւանդութիւնն ստոյգ իցէ։— Եւ ապա երբ կ'սկսանի նորին կարծեցեալ երկայնամանակեայ եպիսկոպոսութիւնն անդէն. և հուսկ յետոյ երբ նահատակուեցաւ։— Ահաւասիկ հարցմունք, որոց չէ՝ մարդ երբեք վճռական պատասխանի տալ, և որք մնացոց են անյայտ և անբովանդակ ի խելի։

Վասն զի արդարեւ ներքին պատմութիւն Հոռոմեական եկեղեցւոյ սկսեալ ի վերջին ամաց առաջին դարու միջև ցրակիզն դարուն երրորդի քանի խառնածովութեամբ կայ և մնայ։

Երուսաղիմ

Յ. Յ. Մ.

ՈՒՂԵՐՉ

Մետրոյայ Յ. Սեբեանց Նոր-Ջուղայեցւոյ՝ ասացեալ ի դանիմի նազարեայ սուրբ եկեղեցւոյն Հայոց որ ի Կարկարա՝ յունր ժամանակն Սրբազան Մետրոյի արքեպիսկոպոսին եւ Առաքելոցի Պարսկա-Հնդկաստանի թեմին ի 21 աւուր Դեկտեմբերին, 1927 աւիմ։

Նորին Բարձր Սրբազնութեան Տեառն Տեառն Մետրոքայ Մագիստրոսին Տէր-Մովսիսեան, բարեխնամ առաջնորդին սրբութեանցն Ամենափրկչեան, ժողովրդապետ արքեպիսկոպոսին և պատուական հովուապետին Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց։

Սրբազան Տէր,

Որպէս մի ի նախկին և ի յետին աշակերտացն «Հայկեան Մարզախրական Ժեմարանին» քաղաքիս մեծի, պատիւ ունիմ մատուցանել ի զիմաց հոգաբարձութեան, ուսուցչաց և ուսանողացն նոյն կրթական հաստատութեան՝ աղջոյն խորին մեծարանաց բարձր սրբազնութեան Ձերութեմ, մագիստրով ի նմին ժամու, որդիապարտ խորին ակնածութեամբ, բարի գալուստ յայս քաղաք հայալատ և յաւէտ պատմական վասն Հնդկահայոց։

Մարզախրական Ժեմարան մեր Հայկեան, հաստատեալ յամին 1821, հիմնադրամով տաղետին Աստուածատրոյ (Մուրադ-խանեան, նախաձեռնութեամբ ազգասիրին Մնացականի Սմբատ Վարդանեան՝ և առատ և իշխանական տրօք Հայոցն Հրեղեկատանեայ, լեալ է խորիսիս հաստատութեան և փարոս լուսաւորութեան աստանդական ազգայնոց մերոց ի սփիւռս Հնդկաց ընդարձակածաւալ երկրին, զգար մի ամբողջ ֆամբլով զմաքոր և զկենսատու կաթն ուսմանց և զխտութեանց՝ թէ տեղացի պատանեաց և թէ եկաց և պանդխտից ի հեռաւոր աշխարհաց՝ ըստ մեծի մասին եկեղոց ի ցանկալի այլ փառազուրկ ծննդավայրէն մերմէ ի Նոր-Ջուղայէ։

Մարզախրական Ժեմարան մեր բարձրագին տուեալ է ի հնումն, ազգին և հայրենեաց, բազում ականաւոր գրապետ, բանասէրս և քաջ հայկաբանս՝ նման Մկրտչի

էմբրիոնան՝ որ յետոյ փայլեցաւ ի Մոսկվա Ռուսաստանի օրպէս ուսուցչական զերահրողական մարմանին Լազարեանց, Յովհաննու Ալիզաւեան, Թադէոսի Խաչիկ Ավետուհեան, Եսայեայ Մանուկեան, Մկրտչի Աղարէշեան, Խաչկայ Արքանաթովմասեան, Թովմասայ Մելքումեան և Յարութիւնի Թադէոս Տէր-Յովհաննէսեան՝ բազմափաստակ և բարեխիշտակ պատմիչն ասեմ Նոր-Ջուղայի, իսկ ի վերջին ժամանակս, այն է յընթաց անցեալ յիսուն ամաց, ելեալ ի ճամարանէն բարենամբաւ և արժանաւոր սանձք նման Յովհաննու Կարապետ Կալուստեան, Կարապետի Ղազար Փլիպպոսեան, Պետրոսի Հայրապետ Կրէտեան, Կարապետի Յովհաննէս Զէյթունեան, Ղեւոնդեայ Մկրտչեան, Միքայէլի Ստեփանոսեան, Գէորգայ Միքայէլեան, Ստեփանոսի և Գեորգայ Տէր Մեսրոփ Գրիգորեան, Մինասայ (բժիշկ) Ստեփանոսի Աղանուրեան, Մկրտչի Յարութիւն Եղգարեան, Առաքելի Կարապետ Մարտիրոսեան, Մինասայ Յովսէփեան, Աւետուհի և Ներսիսի Տէր Պաակ Յակոբջանեան, Յորդանանու Տէր Կարապետ Յորդանանեան, Յովհաննու Նազարէթ Կալուստեան, Գրիգորի Աւետիք Տէր Գրիգոր Յարութիւնեան, Թադէոսի Պետրոսեան, Սիմէոնի Կրէտեան, Յակոբայ Կարապետ Կալուստեան, Սարգսի Տէր Ղազար Արզարեան, օրպէս և ի Տէր հանգուցեալ Յարութիւնի Ստեփանոսեան, Մինասայ (բժիշկ) Մանուկ Բարսեղեան, Տիգրանայ Սարգսեան, Միքայէլի Սարգիս Մարտիրոսեան, Մկրտչի Տէր Յովհաննէս Կալուստեան, Կալուստանի Եղգարեան, Գէորգայ Տէր Ղազարու Արզարեան, Ալթայ Պետրոսեան, Տաշկայ Միքայէլեան, Արզարու, Սեթայ, Թովմասայ և Աղեքսանդրի Յարութիւն Արզարեան, այլովքն հանգերձ, որք զանուն հայութեան զերազանցապէս պանծալի կացուցեալ են յասպարիզին վաճառականութեան, արուեստից և յեկեղեցեան արհեստին թէ աստ ի Հնդկաստան և թէ յայլ տեղիս։ Եթէ սակայն զոյութիւն ունի այսօր այն միակ ազգային վաճառան յայտմիկ անհուն օտարութեան, ի միջի բազմալեզու ազգաց՝ այդ նախնի կրթութեւ և զրատէր Հայոցն Հնդկաստանեայց են չընորհք, զի բարեխիշտակ և յաւէտ տօնե-

լի նախնիք մեր ի միջի բազմազգաց կենաց իւրեանց և զործունէութեանց յասպարիզին վաճառականութեան, չմոռացան և մոռնալ իսկ չկամեցան բնաւ դատաւածախս լեզու ազգիս անդրանկան, այլ ուր որ զընացին ի խնդիր բազմին, անդ կառուցին անմիջապէս եկեղեցիս, օրպէս ի նոքօք վառ և անշէջ պահեսցեն զսուրբ կրօն և զնուրախան լեզու և զբարբառ նախնեաց իւրեանց. և եթէ այսօր կայ և մնայ կարեւոր և յաւէտ պատկասելի Հայ գաղութ մի ի Հնդկս, այդ ի շնորհս եկեղեցւոյ և զբարոցաց մնացեալ է ջարդ անվթար և անկորուստ։

Յերից դարուց հետէ և այսր յայտ է արդէն ընդհանրութեան ազգիս՝ խանդավառ զբաւիրութիւն, ջերմ կրօնասիրութիւն, աննման բարեպաշտութիւն և անհամեմատ ազգասիրութիւն և հայրենասիրութիւն Հնդկահայոց, և եթէ հետեորդան չափազանցութիւն թուիցին բանք իմ և աններելի պարծանկոտութիւն, յայտնի մեծագործութիւնք նոցին յօղուտ ազգին և հայրենեաց անբարբառ վկայք են ցայսօր անհամեմատ ազգասիրութեան, կրօնասիրութեան և զբաւիրութեան նոցին։

Ո՛րք էին արդեօք օրք զհիմն եղին Հայ լրագրութեան անդ ի Մազրաս Հնդկաց յամին 1794, հրատարակութեամբ ԱԶԴԱՐԱՐ անդրանիկ լրագրոյն, եթէ ոչ զրատէր և յառաջդիմասէր Հնդկահայք։

Ո՛րք էին որք բարեբարք և մեկեղտեք հանդիսացան բազմաձախ ապագրութեան Չաճեանի եռահատոր ճոխ ապագրութեան «Պատմութեան Հայոց» և կամ «Ռօյէնի Հնախօսութեան և Պատմութեան»՝ եթէ ոչ կաթօլիկ, այլ ազգասէր Հնդկահայք՝ Շահ-բիմանեանք և Ղարամեանք։

Ո՛րք էին որք հաստատեցին զՄարդասիրական ձերմարանն աստ ի Կալիաթա, զգալոցն յանուն սրբոյն Մարտիրոսի ի նորն նախնիներն և կամ զՌաֆայէլ-Մուրատ զերահուշակ ձերմարանն անդ ի Վենետիկ, եթէ ոչ կրթասէր Հնդկահայք։

Ո՛րք էին որք հաստատեցին զառաջին տպարանն, զոյգ ընդ թղթաշինարանի՝ ի զերահրաշ վանս սրբոյն Էջմիածնի, եթէ ոչ զրատէր Հնդկահայք։

Ո՛րք էին զարձեալ որք կառուցին Ըզհոյակապ զանգակատունն ի վանս սրբոյ

Էջմիածնի և կամ նուիրեցին զարծաթի մեծ կաթնայն յորում եփի և եռայ սրբալոյս Յիւստն Մայր Աթոռոյն Հայաստանեայց՝ Եթէ ոչ բարեպաշտ Հնդկահայք մեր Ազայ Խաչիկ Առաքելեան և սպարապետն Յուզաֆ Պետրոսեան, «Կօռնէլ Յակոբ» կոչեցեալ:

Եւ զի՞ մի առ մի թուեցից, ո՞չք էին որք 150 ամօք յառաջ զառաջինն յղացան զգին զաղափար աղատադրութեան Հայաստանն աշխարհին ի ծանր և յանբմբեր լծոյ Պարսից և այլոց հայաձաջ, Եթէ ոչ հայրենատէր Հնդկահայք մեր Ազայ Շամիր Առաքելեան և հօրամոյն որդի նորին Ազայ Յակոբը՝ որպէս և հայրենանուէր պատուիրակ նոցին անմահն Յովսէփ Էմին, որոյ խնկելի ոսկերք հանգչին ընդ հովանեաւ սուրբ եկեղեցոյս այսորիկ:

Չմոռանամ յիշել և զայս՝ թէ յաւուրս անխլխանութեան ազգին յորում Մայր Աթոռն Հայաստանեայց հեծեր ընդ ծանր և էրկաթի լծով բռնակալացն Պարսից և ընտրութիւն և անկումն կաթուղիկոսաց մեջոց կախեալ լինէր զկամաց և զքմաց ինքնակալացն Պարսից և նեոն սարդորիցն Երեւանայ, ո՞չք էին արդեօք որք առատ և իշխանական տրօք իւրեանց զերծ և ազատ պահէին զՄայր Աթոռն Հայաստանեայց ի ծանր և անզրաւ պարտուց և ի լազմադուժար հարկոց և տուգանաց, Եթէ ոչ մեծաարուեստ, ոսկեակրտ և բարեպաշտ Հնդկահայք բնակեալք ի Սուրաթ, ի Բուսրայի, յԱղլա, ի Գուալիէր, ի Կալկաթա, ի Սէյդապադ, ի Չիլրա, ի Դոքա, ի Մադրաս, ի Մասուլիպատամ, յԱլա Բամաստանի, ի Բոթափրա և ի Սմարանդ Զափայի:

Ուստի կեցցեն հին եւ նոր Հնդկահայք որք ջերմ ազգասիրութեամբ, հայրենասիրութեամբ, կրօնասիրութեամբ, գրասիրութեամբ և կրթասիրութեամբ իւրեանց զրաւեալ են պատկասելի և յաւէտ ուշադրաւ տեղի իմն յէջս ազգային պատմութեան և տեղագրոց՝ զի ո՞ր է այն յազգի մերում որ չիցէ լուեալ զմեծագործութեանց նախնի Հնդկահայոց և ոսկեծնոն բարերարաց նոցին, որք զհամբաւ հարին զանուն ազգին յանհուն օտարութեան յայսմիկ և ցուցին աշխարհի թէ որպիսի պայազատ և մեծագործ նախնեաց էին ինքեանք սեբունդք և շատաւիդք, բեկորք և մնացորդք

զոլով այնպիսի նախահարց, որք ի մեծի փարթամութեան իւրեանց զհազար եւ մի եկեղեցիսն կառուցին յԱնի հրաշակերտ օտանին որ ի Շիրակ գաւառի Հոյաստանեայց:

Սոյն բարեպաշտութիւ պատիւ ունիմ նշնպէս, որպէս Փոխ. Նախագահ «Հայ. կական Բարեգործական Միութեան» տեղական Մասնաճիւղին՝ ողջունել զբարձր Սրբազնութիւն Զեր ի զիմոց վարչական մարմնոյն և համայն անդամոցն, մաղթելով Զեզ բա՛րի գալուստ որպէս և յաջողութիւն Զերոյ առաքելութեան և հովուական այցելութեան յօգուտ ազգին և հայրենեաց:

Բարեգործական Միութեան Կալկաթայի Մասնաճիւղն որ զառաջինն հիմնուեցաւ աստ յամին 1917, անխոնջ ջանիւք և նախաձեռնութեամբ Սրբազան Թորգոմ արքեպիսկոպոսին Եզիպտոսի Հայոց, վերակազմեցաւ և ի վերայ առաւել հաստատուն հիման եղաւ յամսեանն Մարտին ներկայ տարւոյս և ունի զարդիս անդամս և անդամուհիս առաւել քան զմի հարիւր և փաթառն:

Բա՛ղջք է մեզ յուսալ, թէ որպէս յայլ Հայաշատ կեդրոնս, նոյնպէս և աստ ի Կալկաթա, Բարեգործականն ունիցի զիւր բաղձալին յաջողութիւն՝ յօգուտ ազգին և ի փառս քաղցրանուն հայրենեաց մերոց՝ և հի՛մ ոչ, զի հայրենասիրութիւն Հնդկահայոց ի հնուց հնուէ զհամբաւի հարեալ է ընդ ամենայն աշխարհ ի շնորհս մեծագործութեանց իւրեանց:

Ուրին ահնաճութեամբ մատչելով ի համբոյր սրբոյ աջոյդ, պատիւ անձին համարիմ, կալ և մեալ, բարձր սրբազնութեան Զերում, ամենախոնարհ ծառայ, և որպէս միշտ՝ հնութեանց հոյակապ Հնդկահայոց համեստ հետախոյզ՝

ՄԵՍՐՈՊ Յ. ՍԷԹԵԱՆՏ

(Նոր-Ջուլայեցի)

ի Կալկաթայ-Հնդկաց,

ի 21 Դեկտեմբերին, 1927:

